ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 15 -ի նիստի օրակարգը:

Օրակարգ՝

1. Արջուտ համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի քննարկման մասին:

2.Համայնքային սեփականություն հանդիսացող և որպես <<անհայտ>> քաղաքացիների սեփականություն փոխանցված 06-019-0107-0329 ծածկագրի հողամասի հետ կապված անճշտության ուղղման վերաբերյալ:

3.Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 07-ի թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 35-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Արջուտ համայնքի բյուջեի 2020 թվականի երրորդ եռամսյակի կատարման հաղորդումը՝առ 01.10.2020 թվական՝

1.Եկամուտների գծով՝ - 25265,3 հազար դրամ

այդ թվում՝ վարչական բյուջեի մասով - 25105,3 հազար դրամ

ֆոնդային բյուջեի մասով - 160,0 հազար դրամ:

2.Ծախսերի գծով՝ - 9587,3 հազար դրամ

այդ թվում՝ վարչական բյուջեի մասով - 17952,3հազար դրամ

ֆոնդային բյուջեի մասով - -8365,1 հազար դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 36-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ և ՈՐՊԵՍ <<ԱՆՀԱՅՏ>> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ 06-019-0107-0329 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ-ի թիվ 186-Ն հրամանի 8-րդ կետի 5-րդ ենթակետը, Արջուտի համայնքային սեփականություն հանդիսացող և որպես <<անհայտ>> քաղաքացիների սեփականություն՝ ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ համայնքին փոխանցված հողամասի հետ կապված անճշտության ուղղման անհրաժեշտությունը՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող և որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն համարվող 06-019-0107-0329 ծածկագրից առաջացած 06-019-0107-0376 ծածկագրի տակ գտնվող 0,05325 հա բնակավայրերի նշանակության հողամասը, որի նկատմամբ գոյություն չունեն իրավունք հաստատող փաստաթղթեր՝ ճանաչել համայնքային սեփականության հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պետական գրանցում ստանալուց հետո:

3. Պետական գրանցում ստանալուց հետո համայնքի ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 37-Ն

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 07-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 07-ի թիվ 21-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հավելվածների:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՀԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**